3669

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«17» 03 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0021-22

Ձեռնարկողը՝ «ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Երևան, Արամի փ. շենք 2, բն.17

Գործունեությունը՝ Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտների հանքավայրի «Արագած պեռլիտ գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0021-22
<17> 03 2022թ.

Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտների հանքավայրի «Արագած պեռլիտ գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/, Ծրագիր
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Արագածավան համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի՝ «երկրաբանական ուսումնասիրություններ» վերը նշված նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Ներածական մաս Արագածի պեռլիտների հանքավայրի «ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող 1-ին և 2-րդ տեղամասերը տեղադրված են Արագած լեռնազանգվածի ստորոտին, Արտենիի հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան լանջի՝ 1350-1380մ բարձրությունների վրա:

Նկարագրական մաս: Արագածի պեռլիտների հանքավայրի «ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ» 1-ին և 2-րդ տեղամասերի տարածքները գտնվում են ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, Արագածավան խոշորացված համայնքի Արագածավան բնակավայրի վարչական սահմաններում՝ վերջինից 4կմ հյուսիս-արևելք: Տեղամասերին մոտ գտնվող բնակավայրերն են՝ Արագածավանը, Հակոն, Կանչը, Արևուտը (Բարոժ) և Արտենին: Գործունեության համար հայցվող տարածքը զբաղեցնում է 102.72 հա մակերես, հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայրերի: Ուսումնասիրվող տարածքն արևելքից և արևմուտքից սահմանափակվում է Սելավ-Մաստարայի չորահուներով: Երկրորդ տեղամասը հարավից սահմանակից է Թալինի ջրանցքի ձախ ճյուղին: Դիտարկվող տարածքում տորերկրյա ջրային հորիզոնները բացակայում են, ինչը պայմանավորված է տարածքը կազմող հրաբխային ծագման ապարների ֆիզիկա-մեխանիկական հատկություններով և բարձր ծակոտկենությամբ:

1-ին տեղամասի հողային ծածկույթը ներկայացված է բաց-շագանակագույն քարքարոտ հողերով, իսկ 2-րդ տեղամասում տարածված են 0.15մ առավելագույն հզորությամբ գորշ կիսաանապատային քարքարոտ, կարբոնատային-ցեմենտացված հողերը: Ընկերության կողմից հայցվող տարածքն, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում, կամ բնության հուշարձանների տարածքում /առկա բնության հուշարձաններից գտնվելու նվազագույն

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

հեռավորությունը կազմում է 4.49կմ/: Տարածքներում սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Երկրաբանական ուսումնասիրությունների համար ընտրված տարածքը բնութագրվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (ըստ Arm WGS-84 համակարգի).

1-ին տեղամաս

Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
1	4470241.7000	8389336.1000
2	4470272.9000	8389322.5000
3	4470298.6000	8389321.2000
4	4470332.4000	8389325.2000
5	4470382.4000	8389330.6000
6	4470423.2000	8389332.1000
7	4470448.1000	8389328.7000
8	4470509.8000	8389299.7000
9	4470578.2000	8389265.4000
10	4470612.6000	8389266.7000
11	4470652.2000	8389268.0000
12	4470724.7000	8389293.1000
13	4470765.6000	8389305.0000
14	4470860.5000	8389360.4000
15	4470963.1000	8389380.4000

Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
16	4470927.5000	8389948.1000
17	4470928.2000	8390343.6000
18	4470794.7000	8390689.9000
19	4470722.5000	8390684.4000
20	4470701.4000	8390668.8000
21	4470664.8000	8390656.0000
22	4470628.2000	8390657.8000
23	4470600.7000	8390661.5000
24'	4470275.0000	8390650.1000
25'	4470275.1000	8390347.6000
26'	4470285.5000	8389971.2000
27'	4470299.0000	8389604.8000
28'	4470175.5000	8389598.6000
29'	4470163.3000	8389392.9000
1	4470241.7000	8389336.1000

2-րդ տեղամաս

Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
1	4467513.9000	8391050.0000
2	4467523.2000	8391045.7000
3	4467537.5000	8391042.7000
4	4467584.8000	8391038.5000
5	4467634.6000	8391040.0000
6	4467630.3000	8391031.0000
7	4467635.8000	8390955.5000
8	4467643.0000	8390880.5000
9	4467633.8000	8390865.8000
10	4467594.0000	8390818.2000
11	4467542.1000	8390764.0000
12	4467517.8230	8390702.8323
12ա	4467466.9281	8390702.8223
12բ	4467466.9281	8390643.8000
13	4467523.2000	8390643.8000
14	4467530.6000	8390599.0000
15	4467529.8000	8390563.6000
16	4467531.0000	8390540.7000
17	4467529.8000	8390528.2000
18	4467525.8000	8390517.4000

Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
32	4467295.7000	8390656.7000
33	4467292.5000	8390673.1000
34	4467290.9000	8390695.3000
35	4467291.4000	8390722.5000
36	4467292.4000	8390729.4000
37	4467296.3000	8390739.7000
38	4467304.8000	8390756.5000
39	4467316.3000	8390778.1000
40	4467319.0000	8390789.1000
41	4467324.2000	8390803.5000
42	4467327.8000	8390817.0000
43	4467329.9000	8390835.4000
44	4467330.8000	8390868.4000
45	4467332.1000	8390878.1000
46	4467336.2000	8390890.8000
47	4467349.3000	8390924.5000
48	4467366.8000	8390966.2000
49	4467376.1000	8390994.8000

COMMISSION OF EXPERTS

19	4467520.1000	8390507.9000
20	4467514.0000	8390500.8000
21	4467505.6000	8390501.4000
22	4467470.8000	8390504.2000
23	4467440.4000	8390517.1000
24	4467407.3000	8390535.8000
25	4467374.9000	8390551.6000
26	4467372.7000	8390534.7000
27	4467368.5000	8390532.1000
28	4467354.9000	8390553.9000
29	4467340.9000	8390578.2000
30	4467321.9000	8390610.0000
31	4467301.1000	8390643.8000

50	4467384.5000	8391021.6000
51	4467389.2000	8391046.6000
52	4467395.2000	8391071.0000
53	4467400.0000	8391088.6000
54	4467402.8000	8391094.7000
55	4467407.0000	8391099.1000
56	4467413.7000	8391101.2000
57	4467424.2000	8391101.6000
58	4467433.9000	8391101.0000
59	4467442.0000	8391099.7000
60	4467450.2000	8391095.0000
61	4467470.8000	8391080.1000
1	4467513.9000	8391050.0000

ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրի «Արագած Պեռլիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերում արդյունաբերական նշանակություն ունեցող պաշարների հայտնաբերման և գնահատման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- 1:2000 մասշտաբի երկրաբանահանութային և տոպագրաֆիական աշխատանքներ՝ երկու տեղամասերի ընդհանուր 102.72 հա տարածքում,
- 1:2000 մասշտաբի 30կմ որոնողական երթուղիներ՝ հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքի և ապարների սահմանների ճշտման համար,
- 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմում՝ հետախուզա-փորվածքների և ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ,
- 15 հորատման հարթակների կառուցում, ինքնագնաց հորատող հաստոցի 15 տեղակայում և ապատեղակայում,
- 93 և 76մմ տրամագծով ալմաստե թագիկներով 60-ական մետր երկարությամբ 15 հորատանցքերի հորատում, ընդհանուր՝ 900գծ.մ ծավալով,
- ամրակապող խողովակների կապում և հեռացում յուրաքանչյուր հորատանցքի համար, միջինը 5գծ.մ. (5 x 15), ընդամենը 75 գծ.մ, ճանապարհների նորոգում,
- հորատանցքերից 60 հատ նմուշարկում, քիմիական անալիզ՝ 5 նմուշ,
- պետրոգրաֆիական ուսումնասիրություններ՝ 4 նմուշ,
- ֆիզիկամեխանիկական փորձարկումներ՝ 60 նմուշ,
- աշխատանոցային աշխատանքներ՝ երկրաբանական հաշվետվության կազմում՝ համապատասխան ներդիր քարտեզներով, հատակագծերով, կտրվածքներով,
- ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների հայտնաբերման նպատակով դիտարկումների իրականացում /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/,
- ռադիոմետրական չափումներ՝ ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար,
- ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ 720մ^2 մակերեսով տարածքում /144մ^3 հողի շերտի ծավալով/,
- 3կմ երկարությամբ ճանապարհների նորոգում:

Ծրագրավորվող աշխատանքների ընթացքում ժամանակավոր ազդեցություններ կդրսևորվեն մթնոլորտային օդի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Աշխատանքների իրականացման համար նոր ճանապարհներ չեն կառուցվելու, բարեկարգվելու է գոյություն ունեցող՝ 3կմ երկարությամբ ճանապարհը: Հողային ծածկույթի վրա կարճատև բացասական ազդեցություն կդրսևորվի հորատման հարթակների կառուցման ժամանակ: Հորատման հարթակների տարածքից հանվող 0.2մ հզորությամբ 144մ^3 ծավալով հողաբուսական շերտը /որը ներկայացված է բաց-շագանակագույն և կիսաանապատային գորշ հողերով/ կարճատև կկուտակվի անմիջապես հարթակի հարևանությամբ՝ խախտված տարածքների ռեկուլտիվացիոն աշխատանքների նպատակով օգտագործելու համար: Դաշտային ճամբարի կառուցման համար հողերի օտարում չի պահանջվում, քանի որ աշխատակիցները կօգտվեն մոտակա Արագածավան բնակավայրում վարձակալված բնակելի տան անհրաժեշտ կենցաղային պայմաններից /կեցավայր, լոգարան, սննդի վայր/:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր, հետևաբար ջրային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում, քանի որ հորատումը կատարվելու է հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով՝ առանց հորատման լուծույթների կիրառման:

Ընկերության կողմից բնական ռեսուրսներից ջրառ չի կատարվելու, ջրցանի համար անհրաժեշտ տեխնիկական ջուրը և աշխատակազմի համար խմելու ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով, մոտակա Արագածավան բնակավայրից:

Սելավ-Մաստարայի չորահուների ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման և Թալինի ջրանցքի /քանի որ երկրորդ տեղամասը հարավից սահմանակից է Թալինի ջրանցքի ձախ ճյուղին/ անօտարելի գոտիների տարածքների սահմանման նպատակով հետախուզական հորատանցքերը տեղադրվելու են հուներից և հիդրոտեխնիկական կառույցից պահանջվող հեռավորության վրա /նվազագույնը 10մ հեռավորությունների վրա/:

Բուսական բնական ծածկույթը կխախտվի միայն հորատման հարթակների տարածքում, ազդեցությունը կկրի կարճատև բնույթ:

Պեռլիտների երկրաբանական ուսումնասիրության տեխնոլոգիական գործընթացների հետ կապված կառաջանա առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա) կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, որը պետք է վերահսկվի սահմանային թույլատրելի մակարդակի ցուցանիշն ապահովելու համար:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- ուսումնասիրվող տարածքներում նավթամթերքների պահեստավորման, մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքների բացառում,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր, /Ընկերությունը ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո պայմանագիր կկնքվի համայնքի հետ/,
- արտանետվող վնասակար նյութերի չեզոքացնող սարքերի /զտիչներ/ տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- փոշենստեցման նպատակով ճանապարհի և հորատման հարթակների ջրցան /անհրաժեշտ տեխնիկական ջուրը պայմանագրային հիմունքներով կգնվի և կտեղափոխվի տեղամասեր մոտակա բնակավայրերից/,
- աղմուկի և թրթռումների մակարդակի վերահսկողություն,

- թռչունների բների հայտնաբերման դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների իրականացման վայրերից դուրս,
- բեռների և աշխատակազմի փոխադրում գոյություն ունեցող ճանապարհներով՝ կենսամիջավայրի խախտումը բացառելու նպատակով,
- մինչև դաշտային աշխատանքների սկիզբ աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստում /ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում/,
- տեղամասերի տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսատեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Ընկերության կողմից հայցվող տարածքներում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ լցակույտ չի կազմակերպվելու և կառավարման ենթակա ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանա: Հորատման աշխատանքների արդյունքում կառաջանան մաշված, որակական հատկությունները կորցրած հորատման թագիկներ: Հայցվող տարածքներում հորատումը և դրա հետ փոխկապակցված բոլոր աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից, հետևաբար Ընկերության կողմից հորատման թագիկների թափոնների կառավարում չի նախատեսում:

Մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացվելու են Արագածավան կամ Արտենի բնակավայրերում՝ համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքում:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար կարևորվում է աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ շարժական կապի միջոցների առկայության ապահովումը, հետախուզական, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի պատրաստվածությունը, ինչպես նաև առաջին բուժօգնության միջոցների առկայությունը:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացնել 86.4 հազ.դրամ: Այդ աշխատանքները ներառում են՝ հորատման հարթակների տարածքից 0.2մ հզորությամբ հողաբուսական շերտի հանում, կուտակում անմիջապես հորատման հարթակի հարևանությամբ: Հորատման, նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո հողի շերտով /144մ^3 ծավալով/ հորատման հարթակների տարածքների լեռնատեխնիկական վերականգնման աշխատանքների իրականացում՝ ընդհանուր 720մ^2 մակերեսով տարածքում: Վերականգնման աշխատանքները կատարվելու են ձեռքով, հողի աէրացիան ապահովելու համար նախատեսվում է հողի վերին շերտի փխրեցում, այնուհետև հարթեցված մակերեսները վերականգնվելու են օշինդրի սերմով, ինչը տարածքին բնորոշ բուսատեսակ է:

Արագածի պեռլիտի հանքավայրի «Արագած Պեռլիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնց իրականացման ծախսերը գնահատվել են 200.0հազ.ՀՀ դրամ:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Արագածոտնի մարզպետարանը,

առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արագածավան համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Արագածավան համայնքում դեկտեմբերի 28-ին իրականացված 2-րդ հանրային քննարկման ընթացքում բարձրացվել է հարց՝ Ընկերության կողմից հայցվող տարածքի և հնագիտական հուշարձանի տարածքի համադրության խնդրի վերաբերյալ: Փորձաքննության գործընթացում Ընկերության կողմից Հայտին կից փաստաթղթերում ներկայացվել է ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրություն ինստիտուտ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից ուսումնասիրության համար հայցվող տարածքում կատարված հնագիտական և պատմամշակութային հուշարձանների վրա հնարավոր ազդեցության գնահատական, որի արդյունքները վկայել են ուսումնասիրվող տարածքում հնագիտական վայրերի առկայության վերաբերյալ: Նշվածը հաշվի է առնվել Հայտի լրամշակումներում և Ընկերության կողմից փոփոխվել է ուսումնասիրվող տարածքի 2-րդ տեղամասի սահմանները և կոորդինատները՝ ելնելով տարածքում առկա «պալեոլիթյան կայանի» անխաթար պահպանությունից:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակ Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում և ստորև բերված փորձաքննական պահանջների կատարումն ապահովելու դեպքում շրջակա միջավայրի, մարդու առողջության և հնագիտական տարածքների վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկանխարգելվեն, կամ կնվազեցվեն:

Փորձաքննական պահանջներ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Մինչև օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների մեկնարկն, անհրաժեշտ է իրականացնել հնագիտական պեղումներ և դրանց արդյունքները ներկայացնել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ վերջնական որոշում կայացնելու համար:
3. Տեղամասերի տարածքներում ըստ անհրաժեշտության՝ ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանության նպատակով «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում:
4. Աշխատանքները իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2005թ հունվարի 20-ի N 64-Ն որոշման պահանջներով,

ապահովելով՝ Սելավ-Մաստարա հեղեղատարի և Թալինի ջրանցքի համար սահմանված անօտարելի գոտիների տարածքները:

5. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց ժամանակացույցերը: ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշման պահանջներին համապատասխան իրականացնել նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումներ և արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
6. Աշխատանքներն իրականացնելիս պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արագածի պեռլիտների հանքավայրի «Արագած պեռլիտ գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան
Ընդամենը՝ 7 էջ